

շուրջառք, և երկու շտափայ սեղան ծածկոց ի գալն իմ աստ ձեռալ կարել ետու նոյնպէս յիշատակ:

Ըստ որում ի գալն իմ աստ ի Սուրբ անապատն Աէվանու, սոյն ի ներքոյ նշանակեալ թիւ, Յուլիսի մէկէն, ոչ գտի զանցելոց պատմութիւնսն սոցա, ուրիք յօրագրութիւնսն գրեալ, առաջագրութեամբ ներկայառաջնորդ հեղաբարոյ Յովհաննէս վարդապետի՝ աշխատասիրեցաք ձեռամբ մեր գրել՝ մեզ կարեւոր եղեալսն մինչև աստ: Յետ այսորիկ յանձնեցաք նախայիշեալ Ընտոն շնորհունակ արեղային Տփխիսեցւոյ՝ գրել զանօթսն յետ Արբութեանց, զանշարժ կալուածոց զամրագիրսն, և ըզբոլոր մատենից զցուցակսն, ըստ իմ կարգադրութեան:

Քանզի վասն ծերութեան և սկաբութեան խոյ, մնացելոցն ներումն խնդրեալ ի հարց և եղբարց՝ աստ աւար ուսմն արարի բանից իմոց:

Մատնագրոյն թարգմանիչ Մանուէլ Լաւրդապետ Եւանջիստ Աւետիսեանի: 1830. Սեպ. 12. ի յանապատն Աէվանու:

(Ստորագրութիւնն ի յորդոցն):

ԲԵՆԻՍՄԻՆ ԳՐԱՆԿԼԻՆԻ

ԿԵԱՆՔԸ.

(Շարժանութիւնն):

Բ.

ՄԱԼՈՐՈՒԹԻՒՆՔԸ.

Եւթմ պէտք է, որ Յրանկլինի մոլորութեանց վրայ ևս հաշիւ տանք. թէև ի բոլոր սրտէ զնա սիրելով կը զանկայինք

անտես թողնել զանոնք, բայց ճշմարտութիւնն աւելի կը սիրենք, որին որ ամենքս հետեւելու պարտաւոր ենք: Բացի այդմանէ մեզ կը թուի, որ անխոհեմ վարուած կը լինէինք, եթէ Յրանկլինի պէս անձնաւորութիւնը մը միայն մի կողմէն դիտելու ուզենայինք: Այս ազնիւ մարդս ճշմարտութեան լուսէն երկիւղ չունի, ուստի վստահ ենք, որ չը՛նայելով իր քանի մը թերութիւններուն, նա միշտ կիմանայ գրաւել հոգով իրեն համատիպ անձանց ուշադրութիւնը և բարի զգացմունք յարուցանել սոցա սրտի մէջ:

Ասկսենք հաշիւն առանց դանդաղելու և զիտենք, որ դժուար չի լինիլ, քանզի Յրանկլին իր խոստովանութեամբ ևս մարդիկներուն շահ մը մատուցանելու համար՝ սխալներն ինքն իր ձեռքով արդէն պարզ գրած է:

Արբը պատմուած կերպիւ լրագրի համար գրելն առ ժամանակ շարունակելէն ետքը Յրանկլին վերջապէս յայտնեց եղբորը, թէ ով էր անձանօթ հեղինակը: Եւս իմանալով Ջեմս թէև փոխեց իր կոպիտ վարմունքը, սակայն կարճ միջոցէն յետոյ վերստին սկսաւ առաջուայ պէս բռնօրէն չարչարել զնա, այնպէս որ Բենիամին շատ անգամ հօր առջև գանգատելու ստիպուեցաւ և վերջապէս իր ճնշողական վիճակին աւելի երկար յամբերել չըկրնալով՝ վճռեց որպէս և իցէ ազատուելու եղբօր ձեռքէն: Բայց ինչպէս, պայմանագրի տակ ստորագրուողը միթէ ինքը չէր:

Եւթ միջոցին լրագրի յօդուածներէն մին կառավարութեան տհաճութիւնը յարուց. Ջեմս Յրանկլին՝ իբրև տնօրէն

խմբագիր դատաստանի կանչուեցաւ և մէկ ամիս բանտ նստելու և լրագիրը դադրեցնելու պատիժ ստացաւ: Այս վերջին վճիռըս զանց առնել ուզելով եղբայրները որոշեցին, որ լրագիրն այնուհետև նոր անուամբ լոյս տեսնէ և Բենիամին խմբագիր դառնայ: Մակայն այս տեսակ որոշում մ'ի լրումն ածելու համար նախ պէտք էր, որ Բենիամին Յրանկլին գործաւոր աշակերտի անունը՝ դատաստանի զիտութեամբ վերցնէր իր վրայէն և եղբայրը յօժարութիւն տար ջնջելու մեզ յայտնի պայմանները: Չեմս կատարեց այդ, բայց այնուամենայնիւ հին պայմանագրի շահէն զըրկուել չուզելով՝ յորդորեց իր եղբայրը որ նոյն տեսակ ուրիշ նոր թուղթ մը ստորագրէ, և խոստացաւ թաքուն պահել զայն: Խոհեմութիւնը կը պահանջէր, որ գէթ այսպիսի հանգամանքներու մէջ աւագ եղբայրն աւելի սիրով կամ հեղութեամբ վարուէր Բենիամինի հետ: Բայց ոչ. բանտէն դուրս ելածին պէս, նա վերստին նորոգեց անիրաւ հարստահարութիւնը և վերջապէս բանն այն տեղ հասաւ, որ Բենիամին՝ երբոր Չեմս օր մ'ամենաչնչին պատճառով դազանի պէս զայրացած զնա պատժել կուզէր, տպարանը միանգամայն թողաւ ու հաստատ վճռեց երբէք այն տեղ չվերադառնալ, ինչ և պատահէր: Թէև նոր ստորագրած պայմանագիրը որոշ բարոյական պարտք մը կը դնէր նորա վրայ, սակայն իսպառանտեա թողաւ այս կէտը և միայն այս հանգամանքիս ապաւինեց, որ եղբայրը կարող չէ դատաստանի զիմել և նորամէն օրէնքով բան պահանջել, եթէ ինքը նախ և յստաջ պատիժ կրելու չուզենայ: Իրաւ

է, բայց արի տես, որ Չեմս՝ ծնողներու ոչ հոգսին և ոչ վշտին նայելով՝ իսկոյն հնար գտաւ նորան վնասելու և այս բրաւ, որ Բենիամին Բոստօնի տպարաններէն ոչ մինի մէջ գործ ստանալ չըկրցաւ: «Աթէ այդպէս է, ուրեմն թողնենք Բոստօնը, ըսաւ դառնութեամբ սրտարեկ պատանին և ունեցած դրամը գումարելէն ետքը՝ առանց ծնողներու զիտութեան ու կամաց՝ որոշեց նաւով Նիւ-Յօրկ գնալ, ուր որ նա աշխատանք մը գտնելու կը յուսար: Այս ձամբորդութեան մասին հետեալը կը պատմէ նա : «Օղի հանդարտութեան պատճառով օր մը նաւը կանգ առաւ և նաւաստիքը սկսան ձուկն որսալ: Այս դեռ հաւատարիմ էի շնչաւոր և կամ անշունչ էակ չուտելու ուխտիս և հետեւաբար ձուկ բռնելը՝ առանց պատճառի գործուած սպանութիւն կը համարէի. քանզի խեղճուկ կենդանին անզօր էր ում և իցէ զըկանք կամ վնաս հասցնելու: Բայց պէտք է խոստովանիմ, որ առաջ չափազանց իսկ սիրող էի և երբ ամանի միջէն իր պատուական հոտը դէպի ինձ բուրոզ տապկուած ձուկ մը տեսնէի՝ ախորժակս և ուխտս սաստիկ կը թշնամանային: Այսուամենայնիւ չէի ուտեր: Բայց օր մը կտրած ձուկի վրայ նայելով տեսայ, որ փորին մէջ փոքրիկ ձուկ մ'ունէր: «Այ անիրաւ, ըսի ես այն ժամանակ, — եթէ դու ուրիշ ձուկ կուտես, ուրեմն ինչո՞ւ մեք ևս քեզ չուտենք,»: Այդպէս Յրանկլին կը հաշտուի մտեղէն կերակուրներու հետ և կըսէ ինք իրեն. «Տես, թէ ի՞նչ ձեռնառու է քանոսոր կենդանի ինչեւ, որն որ ամեն բանի համար հաւանական պատճառ մը բերել զիտէ:

Նա կը հասնի յաջողութեամբ իր երկրէն երեք հարիւր անգլիական մղոն հեռու տրուած Նիւ - Յօրկ քաղաքին, սակայն չի կրնար գործ ստանալ հոն բնակող միակ սպազորին մտա: Բայց սա խորհուրդ կուտայ, որ Ֆիլադելֆիայ նաւէ, յուսով որ իր որդին — որ նոյնպէս տպարանի տէր էր այն տեղ — թերևս կարող լինի պարապմունք մը գտնել նորա համար: Ծովային ճամբու վրայ սաստիկ անձրևի ու վտանգաւոր ալիկոծութեան ենթարկուելէն ետքը՝ Բենիամին կուգայ Ֆիլադելֆիայ: Այսպէս կը նկարագրէ իր առջի անգամ հոն մտնելը: «Աս եկայ գործավարի հալաւով, իսկ նոր շորերս վերջը գալու էին նաւով: Այս գործաւորի հագուստս աղտոտ էր և ջերերս հին շապիկներով ու գուլբաներով լիքն էին: Ամբողջ քաղաքին մէջ ոչ մի հոգի չէի ճանչնար և բնաւ չէի գիտեր, թէ ուր տեղ թեան պիտի գտնեմ: Ահա՛ նաւակիս վրայ լոյս է լոյս՝ առանց քնանալու ու բան մ՝ ուտելու օգնած էի նաւաստիներուն, և որը բաւականին երկար ճամբայ ոտքով անցած էի և այժմ վերջապէս չափէ դուրս քաղց և յոգնութիւն կրգգայի: Բողոր առ ձեռն գումարս մէկ հոլլանդական թալեր ու մէկ շիլլինգ էր: Շիլլինգները տուի նաւապետին, նա չէր ուզեր ճամբու ստակ առնել ինձմէն, ըստ որում թիակելու օգնած էի. բայց ես խնդրեցի և նա վերջապէս ընդունեց: Արբեմն մարդս քիչ ստակով աւելի առատաձեռն է քան թէ շատով, վասն զի այդ կերպով իր չքաւորութիւնը թաքցնել կուզէ: — Աչքերս մոլորութեամբ յաջ և յահեակ պարճնելով՝ մտայ փողոց մը, ուր որ տղայ մը

տեսայ ձեռքին մէկ հաց բռնած: Հարցուցի, թէ որ տեղ գներ է զայն և շտակ գնացի նորա ցոյց տուած փուռը: Աւզեցած լիթս չկար այն տեղ, ուստի երեք փենսանոց սպիտակ հաց մը խնդրեցի, բայց այս գնի ևս հաց չկար: Աւերջապէս պահանջեցի, որ ինչ տեսակ հաց և լինի տան ինձ երեք փենսի և երեք հատ ահապին նկանակներ ստացայ: Այս էժանութեան վրայ զարմանալով և գրպաններուս մէջ արձակ տեղ չունենալով՝ նկանակներէն մին մէկ թեխ տակ, միւսը միւս թեխ տակ դրի և երրորդն ու տելով գնացի իմ ճամբաս և կրկին եկայ նաւակը ջուր խմելու համար: Հացերէն մին ուտելէս ու վրայէն ջուր ըմպելէս ետքը լիովին հագեցայ և միւս երկու նկանակներս կնջ մ՝ ու նորա որդուն տուի, որք նաւակով եկած էին մեզ հետ և աւելի հեռու պիտի նաւելին: Այսպէս ոյժ առնելէն վերջը նորէն վերադարձայ փողոց, որն որ այժմ լիքն էր վայելուչ հագուստ մարդիկներով, որք ամենքը միւսնոյն ճամբան կրնթանային: Մտայ բազմութեան մէջ ու նորա ճամբան բռնելով՝ եկայ վերջապէս Աուաքերներու ժողովարանը, որն որ հրապարակի վրայ էր: Այս տեղ ես ևս ուրիշներու պէս տեղ մը բռնեցի ինձ համար և բաւական ժամանակ չորս կողմն նայելէս ետքը, տեսնելով որ ոչ ոք ինձ բան չի ասեր և կամ տեսչ չի ուզեր, յոգնութենէս ու ձանձրութենէս այնպէս առողջ ու քաղցր քնոյ մէջ ընկայ, որ ժողովի վերջանալն անգամ չէի լսեր, և թէ բարեսիրտ ոմն զիս հուշիկ չը զարթնեցներ: Աւրեմն Աուաքերներու տաճարն էր այն տունը, ուր որ ես առաջին անգամ ոտք կոխեցի ու ննջեցի Ֆիլադելֆիայի մէջ, »

Տպարանի տէրը, որին որ Ֆրանկլին ուղարկուած էր, ինքը չը կրցաւ գործ տալ նորան, այլ բարեկամացուց զնա իր ընկեր Վայմերի հետ և սա վերջապէս պարապմունք գտաւ նորա համար, թէ և սակաւ ուժով: Այս միջոցին Բենիամինի սընդուկն ու դոյքը եկան և նա մաքուր շորեր հագնելու զուարճութիւնը կրկին ստանալով՝ մտաւ մարդոց մէջ և բարեկամացաւ քանի մը գրասէր երիտասարդներու հետ, որոց ընկերութեան մէջ բաւականին քաղցրը ժամեր կանցուցանէր: Աոյն իսկ միջոցին ծանօթացաւ նաև պարկեշտ ու նորահասակ օրիորդի մը հետ, որոյ անունը Բիդ էր, և նորա աջը խնդրելու փափագ զգաց իր սրտին մէջ: Առաջուայ պէս չափաւոր ու շատ աշխատասէր կեանք վարելով՝ փոքր ժամանակէն ետքը քանի մը կտոր ոսկու տէր գարձաւ և երբէք նեղութիւն կամ վիշտ չը քաշեց օտարութեան մէջ: Յաւալի է միայն, որ այդ միջոցին հօր տունը չէր յիշէր և լուր մ'անգամ չէր յայտնէր ծնօղներուն: Հանդամանքներու բերմամբ նորա ազգականներէն մին՝ Աորերթ Հոլմ, որ առևտրական նաւի մը տէր էր, իմացաւ որ Բենիամին Ֆիլադելֆիայ է և նամակի միջնորդութեամբ ծնօղներու և եղբօր դէմ արած անիրաւութիւնը նորա միտքը բերելով՝ խնդրեց որ տուն վերադառնայ: Ֆրանկլին իսկոյն մտերմարար պատասխանեց ազգականին ամիսսալով, որ չի կրնար խնդիրն կատարել և սպա ընդարձակօրէն պատմեց, ինչ որ պատահած էր իր ու եղբօր մէջ: Ազգականն ընդունեց Բենիամինի դրութիւնը՝ «Իւր Վասթլ» նոյն իսկ ըսպելին, երբ որ Աիր Ալլիսամ Վայթ անուն գաւառա-

պետի հետ միասին նստած էր: Թէ և նամակի միտքը բացասական էր, բայց ձեռն փաստարանութեան կողմանէ տարազադործ մը լինելով՝ անչափ ուրախալի տպաւորութիւն արաւ Հոլմի վրայ, որ սա իսկոյն ցոյց տուաւ զայն դաւառապետին, որն որ նոյնպէս զմայլած մնաց նամակէն: Բենիամինի 18 տարեկան լինելն իմանալով՝ դաւառապետն աւելի զարմացաւ նորա քանքարի վրայ և յայտնեց, թէ պէտք է անշուշտ օգնութիւն մը հասցնել այսպիսի ընդունակ պատանեոյն և ասաց, թէ ի սրտէ յօժարիւր աջակցութեամբ տպարան մը հիմնել տալ նորան և օգնել, ինչքան որ կարելի լինի:

Այս անցքի վրայ Բենիամին բնաւ տեղեկութիւն չունէր, վասն զի Հոլմ վերջը յայտնեց նորան, ինչ որ մեք վերը պատմեցինք. սակայն անոր հետեանքը իսկոյն զգալու էր: Ատկից քանի մ'օր զկնի, այն ինչ Բենիամին և Վայմեր պատուհանի մօտ աշխատելու վրայ էին՝ յանկարծ տեսան, որ դաւառապետն ու Ֆրենչ անուն մեծաւորը փառաւոր զգեստ հագած փողոցէն անցնելով՝ շիտակ իրենց տպարանին կամօտնան: Վայմեր կարծելով թէ այս այցելութիւնը զինքը տեսնել կուզեն ու թերևս սպասարկելու բան մ'ունեն, իսկոյն աճապարեց և աստիճաններէն վայր վազելով՝ բաց արաւ տան դուռը հիւրերու առջև: Գաւառապետը Ֆրանկլինի մասին հարցուց, նորա գործարանը մտաւ քաղցրութեամբ հետը զրուցեց և վերջապէս հրաւիրեց, որ բաժակ մը զինի ըմպելու պայ իր հետ: Ասեմաշուք պարոնի զեջողութեան ու մեղմութեան վրայ ապշած՝ Ֆրանկլին նոր շորեր հագաւ, և փոքրիկ

ընկերութիւնը զնաց զնեառն: Հոն մա-
դէյոտ գինու բաժակն առջևը դրած՝ գա-
ւառապետը խորհուրդ տուաւ Ֆրանկլի-
նին, որ տպարան մը հիմնէ իր բնական քա-
ղաքին մէջ, խոստանալով ամբողջ գա-
ւառի տպագրելի բաներն այժմէն իսկ իրեն
կապահովացնէ: Այլընտրանք Ֆրանկլին յայտ-
նեց, որ տպարանի հիմնարկութեան հա-
մար պէտք եղած միջոցներն իր հօրէն
ստանալու յոյս չունի, նա մանաւանդ որ
զազտնի փախստովն նորա սրտին վերք ու-
վիշտ պատճառած էր, գաւառապետը քա-
ջալիրեց զնա և ասաց, որ ինք իր ձեռքով
յորդորական նամակ մը կը դրէ հօրը և
ձեռնարկութեան անտարակուսելի օգուտ-
ները պարզ ցոյց կտայ նորան:

Այս խօսակցութիւնէն ետքը Ֆրանկլին
ճամբայ ընկաւ դէպի տուն: Հայրը սրտի
մտօք ընդունեց զնա, սակայն յօժարու-
թիւն չը տուաւ վերոյիշեալ գործին և իր
ուրախութիւնն ու շնորհակալութիւնը
յայտնելով գաւառապետին որդուն ցոյց
տուած բարեկամութեան համար, գրեց,
թէ իբրև մեծ բնասնեաց հայր անդոր է
տպարանի շինութեանը կարևոր եղած
գումարը մէկ որդուն յանձնել, նա մա-
նաւանդ որ սա զեռ տասնևութ տարեկան
և ուրեմն տակաւին անփորձ պատանի մը
էր:

Ֆրանկլին չէր ուզեր եղբոր այցելութիւն
մը չարած հայրենիքը թողնել: «Այդ
պատճառով ես զնացի տպարան. կրսէնա.
այժմ աւելի վայելուչ հաղուած էի, քան
թէ առաջ երբոր նորա մօտ էի, վրաս ժա-
մացոյց մը կախուած էր և քսակից մէջ
գրեթէ հինգ ստերլինգի չափ աղնիւ դրամ
կար: Այլընտրանք շատ քաղաքավարի չընդու-

նեց զես և ստրէս ցղլուխ վրաս նայելն
ետքը իր գործը հանդարտ շարունակեց:
Պործաւորները մօտեցան ինձ և սկսան
հարցնել, թէ ո՞ւր էի և ինչ երկիրներ տե-
սած էի: Պատասխանելով նոցա հարցե-
րուն, չափէ դուրս գովեսաներ կարգացի
Ֆիլադելֆիայի վրայ, պատմեցի, թէ ինչ
երջանիկ կեանք կը վարեն այն տեղի մար-
դիկն և յայտնեցի որ կրկին հոն վերա-
դառնալու եմ: Աշխատաւորներէն մին կա-
մեցաւ իմանալ թէ ինչ տեսակ էին հոնի
դրամները: Այս լսելով իսկոյն մէկ բուռն
արծաթ հանեցի զբաւանէս և ցոյց տուի,
նոցա համար այդ չափանուած բան էր,
որովհետև Բոստոնի մէջ սովորական դրա-
մը թղթի էր: Այնուհետև զանց չափ
ժամացոյցս և սյերեան հանելու, բայց
տեսնելով որ եղբայրս դառն ու դժգոհ
լինելէ չէր դադարեր, գործավարներուն
մէկ ստերլինգ ընծայեցի և իսկոյն դուրս
ելայ տպարանէն: Այլընտրանք շատ բարկա-
ցած էր այցելութեանս վրայ, և երբ մայրս
հաշտութեան վրայ խօսելով մեզ վերս-
տին միաբանել կը գանկար, պատասխանեց
թէ ես այն աստիճանի վերաւորած եմ
զնա գործաւորներու առջև, որ չի կրնար
երբէք գայն մոռնալ ու հետս հաշտուիլ,
սակայն կը սխալէր այդ կտորիս մէջ”:

Տան բարեկամները կուզէին փոխել հօր
միտքը, բայց նոցա ջանքը ի դուր կորաւ:
Ներունին կրսէր, թէ յիմարութիւն է
պատանու մը ձեռքով այնպիսի մեծ ձեռ-
նարկութիւն սկսելը. “Թող այլ ևս երեք
տարի զարգանայ և այնուհետև արդէն գայ
հետս խօսելու գործի մասին” — կրսէր նա:
Մակայն և այնպէս ուրախ էր, որ Բենիամին
զեղեցիկ հասակ առած էր և գաւառապե-

տի նման կարող մարդու բարեկամութիւնը կը վայելէր: "Շարունակիր, որդեակ, աշխատասիրութիւնդ, ասաց նա վերջին անգամ. այդպիսով քանի մը ժամանակէն ետքը գուցէ ինքդ առանց ուրիշ օգնութեան կարող կը լինիս տպարան մը հիմնելու":

Աւ այդպէս Արանկլին իր յուզարկաւորութեան նպատակին չը հասած՝ վերագարձաւ դէպի յետ. բայց արտում չէր, ըստ որում այս անգամ ծնողական օրհնութեամբ կը հեռանար հայրենի տունէն: Ճամբու վրայ նորա նաւակը կանգ առաւ "Նիւ-Փոսթ և Արանկլին այցելութեան գնաց եղբայրներէն մինին, որ հոն կապրէր և շատ զգուանօք ընդունուեցաւ նորատան մէջ: Այդ եղբօր ընկերը - Ալերոն անուն պարոն մը բարեկամացաւ Արանկլինի հետ և նորա Աիլադելֆիայ գնալն իմանալով, մուրհակ մը յանձնեց նորան և խնդրեց, որ անոր զօրութեամբ Աիլադելֆիայի մէջ իրեն վճարելիք 36 Փունդ ստերլինդ պարտքը ստանայ և դրամը մօտը պահէ, մինչև որ լուր չտանայ զայն "Նիւ-Փոսթ ուղարկելու: Բենիամին սրտի մաօք յանձն առաւ կատարել բարեկամի խնդրը:

"Նիւ - Յօրքի մէջ սա հանգիպեցաւ Քոլլինսին, որոյ հետ ինչպէս որ ընթերցողն կը յիշէ, առաջ նա շատ կը վիճէր և որ այն ժամանակ գիտութեամբ ու յաջողակութեամբ նորամէն բարի էր: Քոլլինս կուզէր այնպէս Աիլադելֆիայ գալ, այն տեղ իր բախտը փորձելու, և միացաւ Արանկլինին, որ մինչև այժմ դեռ ջերմ սիրտ պահած էր մանկութեան ընկերի համբար: Ճամբու վրայ իմանալով, որ

Քոլլինս միանգամայն գրամ չունէր ու միայն ընկերի վրայ ապաւինելով յուզեւ լած էր, Արանկլին իսկոյն օգնութիւն առաջարկեց նորան, սակայն վատն այս էր, որ ընկերին արուելիք ստակն այն գումարէն հանելու էր, որոյ վրայ միայն Ալերոնը կարող էր իշխանութիւն բանեցնել: Մէկ բան չը հանեց Արանկլին ընկերին վրայ. իրբև առեարական գործակատար այլև այլ ձաճորդութիւններ անելով՝ Քոլլինս համեմատարար կարճ միջոցին արդէն խմիչքի սովորած էր: Աիլադելֆիայի մէջ նա չկրցաւ գործ գտնել, թերևս այս պատճառով որ կարմրած երեսն ու շունչը արդէն առջևէ մասնողարար կիմացնէին նորա ինչ տեսակ մարդ լինելը, և այդպէս օրէ ցօր և շաբաթէ ի շաբաթ Արանկլինի քսակէն կապրէր և ընկերի բարի կամքը չարագործելով նորամէն մեծ ու փոքր գումարներ առնելէ չէր դադարեր: Այդպէս Ալերոնի ստակէն հանուած գումարի թիւը քանի գնայ կը շատնար և վարանեալ Արանկլին չէր զիտէր, թէ ինչ պէտք է անէ, եթէ որ յանկարծ ստակն իրմէն պահանջելու լինին:

Աիլադելֆիայ հասնելէն ետքը Արանկլին յայտնեց գաւառապիտին, ինչ որ լաւ էր հօրէն: Արովհետև նա չի ցանկար Չեղ օղնել, դէ՛հ, ուրիմն ես կօղնեմ Չեղ" ըսաւ գաւառապետը: Այդ շատ լաւ խօսքեր էին, սակայն դժբախտարար գաւառապետն այն տեսակ մարդոց կարգէն էր, որք բարեսրտութեամբ թէև շատ բան կը խոստանան, բայց բնաւ չեն մտածեր, թէ արդեօք զանոնք կարող են իրաւ կատարել: "Այս Չեղ ստակ կուտամ, նոյնպէս և նամակներ" — ասաց նա Արանկլինին. գնացէք

Անգլիայ և բերէք այն տեղէն ինչ որ պէտք է տպարանի համար: Պենելու բաները մասամբ նաղտ ստակով կառնէք և մասամբ նամակներուս զօրութեամբ—վերեսիայ և ֆինացեալ պարտքը հետզհետէ կը վճարենք”:

Յուզի ընկնելէն առաջ Բենիամին ուզեց ամուսնանալ չքնաղ Բիդ օրիորդի հետ. սակայն մայրը այս ամուսնութեան նկատմամբ հօր հետ ձայնակցելով ըսաւ, թէ տասնևութ տարեկան մարդ մը տակաւին գրեթէ մանուկ է և որոշեց, որ պսակը յետաձգուի գոնեա մինչև Բենիամինի վերադառնալն ու տպարանի հիմնուիլը: Բենիամին հնազանդեց սիրելի մօր կամքին և Բիդ օրիորդի հետ—ինչպէս որ ինքը կը վկայէ,—+պզտ խոստումներն անելէն ետքը ծամբայ ընկաւ դէպի Աճոնգօն:

Գաւառապետի ինչ տեսակ մարդ լինելը Պրանկլին նախ և առաջ Աճոնգօնի մէջ իմացաւ. նորան նամակներ տրուած էին, զբամբը ետքը պիտի գար գաւառապետի խոստմամբ: Բայց դրամը չեկաւ, իսկ նամակները միանգամայն օգուտ չը բերին: Աւ այդպէս Բենիամին ապրանք գնելու տեղ ստիպուեցաւ այժմ գործ որոնել, որպէս զի օրուայ հացի կարօտ չմնայ: Աս գնաց Փալմերի տպարանը, որ Աճոնգօնի մէջ նշանաւորներէն մինն էր, և ընդունուեցաւ այն տեղ: Արկար ժամանակ Փալմերի մօտ աշխատելէն ետքը, աւելի լաւ պաշտօն գտաւ Ալթսի տպարանին մէջ ուր որ գրեթէ յիսունի չափ գործաւորներ կը բանէին: Բոլոր այս գործաւորները սաստիկ արբեցող էին: Արբ նոքա տեսան, որ Պրանկլին միայն ջուր կըմպէ՝ վրան ծաղրանելով “Ամերիկային ջրամարդ” մական-

նուն տուին նորան և բնաւ չէին կարծեր, որ նորա ջրերուն մէջ ևս կարող է զօրութիւն գտնուիլ: Այս պատճառով նոքա սաստիկ զարմացան, երբոր տեսան, որ Պրանկլին իւրաքանչիւր ձեռքի մէջ մէկ մէկ ձև բռնած աստիճանի վրայ կը բարձրանար, այն ինչ նոքա երկու ձեռքի կարօտ էին միայն մէկ ձև վերցնելու համար: “Մամուլի գործակիցն, կըսէ Պրանկլին, ամեն օր մէկ բաժակ զարեջուր կըմպէր նախաձաշկէն առաջ, մէկ բաժակ նախաձաշկի և ձաշի մէջ տեղը, մէկը ձաշին, դարձեալ մէկն երեկոյեան վեց ժամին և վերջապէս այլ ևս մէկը ընթրիքին: Այս սովորութիւնը զգուելի թուեցաւ ինձ. իսկ նա կը վկայէր, թէ այդ բոլոր զարեջուրը նորան անշուշտ հարկաւոր է աշխատելու ոյժը չը կորցնելու համար: Աշխատեցայ բացատրել նորան, թէ զարեջուրի տուած ֆիզիքական զօրութիւնը յառաջ կուգայ միայն դարիի ամուր մասերէն, որք ջուրի մէջ լուծուելով՝ զարեջուր կը գոյացնեն, և թէ մէկ փենիանոց հացի մէջ աւելի շատ ալիւր կայ և որ ուրեմն եթէ նա այս հացըն ուտէ ու վրայէն բաժակ մը ջուր ըմպէ աւելի զօրութիւն կըստանայ, քան թէ մէկ սափոր զարեջրէն: Սակայն եզրափակութեանս չընայելով՝ գործաւորն իր սովորութիւնը կը շարունակէր և ամեն շաբաթ օր չորս կամ հինգ շիլլինգ կը վատնէր միայն փորթերի համար: “Աորա պէս կապրէին և միւս թշուառականները, որք մինչև ի մահ աղքատութեան և կարօտութեան մէջ կը մնային”:

Յարատե աշխատասիրութեամբ ու մանաւանդ զբաշարութեան մէջ ցոյց տուած գերազանց յաջողակութեամբ Պրանկլին

ապարանատիրոջ սէրն այնպէս զրաւեց, որ սա բոլոր շտապողական գործերը—որք և սովորաբար աւելի թանկ կը վարձատրուէին—նրան յանձնեց: Ինչպէս որ յառաջ Վոլլինս, նոյնպէս և այժմ Ռալֆ անուն մարդ մը ձանձրոյթ կուտար նրան: Աւերադարձնելու վրայ խապառ փոյթ չը քաշելով և հետզհետէ ստակ կառնէր Պրանկլինէն և պարտքի թիւը արդէն 27 ֆունթի հասուցած էր: Օր մը Ռալֆ հեռացաւ Լոնդոնէն ուրիշ տեղ պաշտօն որոնելու համար. նորա ամուսինը տունը մնաց և Պրանկլին աւելի խնամ կը քաշէր վրան, քան թէ անկու պատշաճ էր: Տուն վերադառնալով Ռալֆ սկսաւ հայհոյել Պրանկլինի դէմ և յայտնեց, թէ շնորհակալութենէ ազատ կը համարէ իր անձը—այսինքն թէ պարտքը չի վճարեր: Այդ վճռի վրայ նա հաստատ մնաց և Պրանկլին գրեթէ ոչ մէկ փննի յետ չըստացաւ:

Բայց ի՞նչ դրութեան մէջ էին նորա յարաբերութիւնքն ըրդ օրիորդի հետ: Այս օրիորդը նորա վերադարձին ի դուր սպասելէն ետքը, տեսնելով որ նա մէկ տարիէն աւել ընաւ նամակ չի գրեր, կարծեց թէ Պրանկլին զնա արդէն մոռցեր ու մերժեր է: Այդ միջոցին մէկ ուրիշ մարդ խնդրեց նորա աջը և ըրդ՝ մօր յորդորանքին լսելով յօժարութիւն սուս և ամուսնացաւ մարդու հետ:

Պրանկլին արդէն համարեա մէկ տարի ու կէս է որ Լոնդոն էր և իր արհեստի մէջ բաւականին մեծ յառաջադիմութիւն արած էր: Արեկոյեան ազատ ժամերը այժմ ևս ընտիր գրքերու ընթերցանութեան կը նուիրէր և կամ ժրաջան երիտասարդներու ընկերութեան մէջ կանցուցանէր:

Օր մը նա բարեկամացաւ Վինհամ վաճառականի հետ և սա համակրութիւն զգալով դէպի Պրանկլին, խնդրեց որ գործավարի պաշտօն ընդունէ իր մօտ: Վինհամ ազնիւ ու բանիմաց վաճառական էր և կուզէր հարուստ ապրանք տանել Վիլյադելֆիայ. բացի լաւ ոռձկէն որ նա որոշած էր Պրանկլինի համար, նա խոստացաւ նոյնպէս որ քանի մը ժամանակէն յետոյ ինքնակախ առուտուր սկսելու կօզնէ նորան: Այդ գործի վրայ ունեցած բարի յոյսերէն ու վերջապէս հայրենեաց անձկալի կարօտէն զրդուելով, Պրանկլին յանձն առաւ Վինհամի առաջարկութիւնը և առաջուայ պաշտօնի հրաժեշտ տալով՝ սկսաւ այլ և այլ ապրանք գնել իր նոր տիրոջ հետ:

Բայց ուրիշ տեսակ հրաժեշտ մ' ևս առած էր նա այդ միջոցին: Իր անցեալ արարմունքները դիտելու ժամանակ քանի զնայ աւելի պարզ կը տեսնէր, որ խրդձի հաւանութիւն չէր կարող շնորհել իր ամեն մէկ արարմունքին. նոյնպէս և ծանօթ երիտասարդաց վրայ մտածելու ժամանակ, մինչդեռ ոմանց սկզբունքներուն յարգանք տալու հարկ կը համարէր, միևնկրունը նորա զգուանքը կը յարուցանէին և անարգ կը թուէին աչքին: Նա որոշեց այնուհետև արդարութեան և հաւատարմութեան ճամբան ընթանալ, և մեք դեռ առիթ կուեննանք տեսնելու, որ նա իբրև ազնիւ մարդ, որ նա իրաւ հաւատարիմ մնաց այս ուխտին: Աւ այսպէս՝ մոլորութեանց ժամանակն անցաւ ու զնայ:

Գ.

ՎԵՐԱԹԵՒՈՒՄՆ

Գեղեցիկ և իմաստուն կերպով քննութեան կենթարկե Միգիւէթ Ֆրանկլինի մտաւոր զբաղմունքը այդ միջոցին: «Տիեզերքը—կրտսէ նա-օրէնքներու ներդաշնակութիւն է: Ակսեալ աստղերէն, որք միլիօնաւոր տարիներէ ի վեր անսահման տարածութեան մէջ ըստ օրինաց ծանրութեան կըշռեն և ամենայն իրերու բարձրագոյն Արարչէն մէկ անգամ ընդունած հզօր զարկին և ձողական անյեղլի զօրութեանը կհետեւեն, մինչև տերեւներու վերայ երերալով լուսնական կեանք վարող միջատները—ամենայն մարմին, ամենայն էակ որոշեալ և հաստատուն օրինաց կըհնազանդին: Այս՝ Աստուծոյ խորագէտ իմաստութեամբ սահմանուած, նորա բարութեամբ ի գործ դրուած և նորա արդարութեամբ պահպանուած սքանչելահրաշ օրէնքներն ամենակատարեալ շարժողութիւն յառաջ կրբերեն առատ ու հարուստ կեանք կըծաւալին և դաշնակաւոր կարգ կըհաստատեն տիեզերաց մէջ: Մարդս բոլոր արարածներէն ամենաբազազրեալն ու վսեմագոյնը, որ այս օրէնքներուս ներքե և ոչ թէ վրան կանգնած է, որ զանոնք մտքով ըմբռնել կարող է, բայց փոփօսելու անզօր, որ մարմնոյ նիւթական և էակաց կենդանի օրէնքներուն ենթարկուած է, — Մարդս իմացականութեան հոյակապ ձիրքը, ազատութեան գեղեցիկ իրաւունքը և արդարութեան աստուածային զգացմունքն ունի իր մէջ: Իբրև բանաւոր և իմացական էակ՝ պէտք է որ նա ձանաչէ տիեզերաց օրէնքները, իբրև

արդարութիւն զգացող՝ պէտք է որ հընազանդի անոնց և քանզի ազատ է, պէտք է որ պատիժ ընդունէ, եթէ խտտորի այս օրէնքներէն, ըստ որում կարող չէ խանգարել զանոնք ոչ Ֆիզիքական և ոչ բարոյական սահմաններու մէջ՝ առանց պատիժ կրելու իր տգիտութեան և կամ սխալի համար: Առողջութիւն ու հիւանդութիւն, երջանկութիւն ու տառապանք, խնդրութիւն ու վիշտ — այս ամենը կախուած են կամ նորա փոյթեռանդ ջանքէն, որով վերոյիշեալ օրէնքներուն կըհետեւի և կամ վտանգաւոր և անփոյթ յամառութենէն, որով անոնց դէմ կանխրաւէ:

Ֆրանկլին հասկցաւ այս: Տեսնելով աշխարհիս կարգը, նա ամբարձաւ դէպի անոր Արարիչն, ձանաչեց զԱստուած և հաստատուն կայան տուաւ նորան իր մտքի ու սրտի մէջ: Վիտելով ողբոյ ու նիւթոյ տարբեր բնութիւնը, անբաժանելի ողին և անցաւոր նիւթը — եզրափակեց, ինչպէս որ բոլոր ազգերն և բոլոր՝ թէ կոպիտ և թէ մաքուր կրօնները, որ մարդուս հոգին անմահական է: Տեսնելով կաբզի հարկաւորութիւնը տիեզերաց մէջ ու մարդուս արդարութեան ընդունակ լինելը — հետեցուց, որ բարի գործը վարձք ու չար գործը պատիժ պիտի ստանայ այս և կամ այն կեանքի մէջ: Աստուծոյ զոյութիւնը, հոգոյ անմահութիւնը, մարդկային արարմանց վարձատրութիւնը եթէ որ նոքա բարոյականին յարմար, և պատիժը, եթէ որ բարոյականին հակառակ գործուած են — Ֆրանկլինի աչքին ճմարիտ հաւատոյ հիմունք զարձան և այդպէս նորա բնական հաւատը յայտնեալ հաւատոյ հաւաստիութիւն ստացաւ:

Մինչև այժմ Յրանկլին իր գիտութիւնը ընդարձակելու և իր արհեստի մէջ ըստ կարելոյն շատ կրթուելու փոյթ կը քաշէր. այժմ նա զգօն ծանրութեամբ իր բարոյական կեանքն ինկատի առաւ և վճռեց ունեցած թերութիւնքն ուղղելու, բարի սովորութեանց մէջ զինքն ամրացնելու և առաքինի կեանք վարելու, մէք յառաջ կը բերենք այն բարի յատկութեանց ցուցակը, զորս նա ինքն իրեն սեփականել ցանկալով ամեն մինի վրայ առանձին ծառայութեամբ թղթի վրայ գրած էր:

1. Ժողովուրդ-ն: Մի՛ ուտեր այնչափ որ անասուն դառնաս և մի՛ խմիր այնքան որ գլուխդ այրուի:

2. Լուսն-ն: Խօսիր միայն այն, ինչ որ քեզ և ուրիշներուն օգտել կարող է:

3. Աստուծոյ հրահր-ն: Ամեն բանի որոշեալ տեղ տուր, ամեն մէկ գործիդ որոշեալ ժամանակ:

4. Աճուրդ-ն: Աճուրդ կատարել այն ինչ որ անելու ես, և կատարիր այն ինչ որ վճռած ես:

5. Աստուծոյ հրահր-ն: Անօգուտ ծախքեր մի՛ աներ ոչ քեզ և ոչ ուրիշներու համար, այսինքն ոչինչ մի՛ վատներ:

6. Արարչի հրահր-ն: Երբէք ժամանակ մի՛ կորցնեիր—միշտ օգտաւէտ գործով զբաղիր: Երա ինչ որ միայն կարևոր է:

7. Անկեղծ-ն: Խոտորնակ ճանապարհներ մի՛ ընտրիր և թոյլ տուր, որ միայն անկեղծութիւնն ու պարզութիւնը առաջնորդ լինին մտքերուդ:

8. Արարչի հրահր-ն: Ոչ դբի դէմ անիրաւութիւն մի՛ գործեր և արա ուրիշներուն, ինչ որ նոքա իրաւունք ունին սպասել քեզմէն:

9. Արարչի հրահր-ն: Չայրայեղութենէ զզոյշ կաց և մի՛ լինիր վրէժխնդիր քեզ վերաւորողներու դէմ, թէ և կարծէիր, որ նոքա ատոր արժանի են:

10. Արարչի հրահր-ն: Աեղզ մի՛ համբերիր ոչ մարմնիդ վրայ, ոչ շորերուդ վրայ և ոչ բնակարանիդ մէջ:

11. Արարչի հրահր-ն: Չնչին կամ սովորական և անխուսափելի պատահարներէ մի՛ վրդողիր, մի՛ զայրանար:

12. Արարչի հրահր-ն: Անարատ ու մաքուր կեանք վարէ, որպէս զե քո և կամ ուրիշի հանգստութիւնը ու բարի համբաւը վընաս չըկրեն:

13. Խոտորնակ-ն: Ամանիք Յիսուսին և Սոկրատեսին:

Այս կանոններու դասաւորութեան մէջ անգամ կարգ դրած էր Յրանկլին: "Ժուժկալութիւնը կամ չափաւորութիւնը ամենէն վերը դասեցի, կըսէ նա, ըստ որում մարդուս գլուխը սառ և մտքերն ազատ կը պահէ. այդ շատ հարկաւոր է, եթէ ուզենք մեր վրայ միշտ հսկել, միշտ արթուն մնալ և միշտ պատերազմել հին սովորութեանց հրապոյրի և փորձութեան ուժի դէմ, որք անդադար կհալածեն զմեզ: Այս առաքինութեան մէջ մէկ անգամ զօրանալէն ետքը լուսն-նը աւելի հեշտ թուեցաւ ինձ, և որովհետեւ բարի գործելու համար դիտութիւնք ստանալ կուզէի, որովհետեւ կտեսնէի, թէ մարդականջով աւելի բան կուսանէ, քան թէ լեզուով, և որովհետեւ ամեն անգամ ծաղը և կատակով խօսելու հին սովորութենէս—որով իմ ընկերութիւնս միայն թեթեամիտ մարդոց հաճելի կը դառնար—վերջապէս հրաժարուել կը ցանկայի, ուստի լուսն-նը


...նեանը երկրորդ անգը սուի: Տարակոյս շունէի, որ նորան յաջորդող Կարէի միջնորդութեամբ աւելի ժամանակ կրստանամ ուսմունքս և գործերս յառաջ տանելու: Այնպէս, որ իմ մէջ արդէն սովորութիւն զարկած էր, վստահութիւն կուտար ինձ միւս առաքինութեանց թիկն ածելու, իսկ սակաւապիստութիւնն և աշխատանքն ինձ, որք մինչև այժմ ունեցած պարտքերս քիչացնելով, բարօրութիւն և անկասութիւն կը շնորհեն ինձ, անկեղծութեան, արդարութեան, երկայնամտութեան, մաքրասիրութեան, հանդարտութեան, կուսութեան և խոնարհութեան մէջ ևս կը թուելու կօգնէին:

Ասկայն երկու տեսակ կանոններ կան. կան այնպիսիք, որք անպտուղ և այնպիսիք, որք պտղաւոր բողբոջի կրնամանին. Ֆրանկլինի կանոնները վերջին տեսակէն էին: "Նսկեցէք և աղօթս արարէք" պատուէրն ի մտի ունելով, ամենայն երեկոյ նա հաշիւ կը պահանջէր ինք իրմէն ամբողջ օրուայ ժամերու համար և խստիւ դատաստան կընէր ինք իր վրայ: Այնուհետև վերոյիշեալ կանոններու գրքոյկը առջևը կը դնէր և կընշանակէր, թէ ինչ բան անոնց յարմար և ինչ բան ընդդէմ գործած է: Այնպէս ի խորուց սրտէ ջերմ աղօթք կամբառնար դէպի Արարիչն ամենայնի և զօրութիւն կը մաղթէր նորամէն: Այս գրքոյկի մէջ շատ աղօթքներ կային, մասամբ նորա սրտէն դուրս բղխած, մասամբ ս. գրքէն և մասամբ իրեն սրտակից աշխարհական բանաստեղծներէն առնուած: Թոմսոն անգլիական բանաստեղծի հետեւեալ տունը ստէպ յառաջ կուգայ զըրբոյկիս մէջ.

Ազգիւր կենաց և լուսոյ, Արարիչ իմ
 Աստուած:
 Տուր ինձ զբարին ձանաչել և զայն
 միշտ կատարել
 Պահպանեա զիս յիմարութենէ և ի
 մեղաց
 Այլ յամենայն սնտախ, յամենայն գարշ
 խորհրդոց.
 Այս զիս զխտութեամբ, հոգւոյ հանգստութեամբ
 Այլ անթառամ առաքինութիւն շնորհեա ինձ:

Քաղցր է տեսնել մանաւանդ, որ Ֆրանկլին արտաքին կողմանէ բարեբաստիկ վիճակի մէջ էր այս եռանդագին վերաթեման ժամանակ: Այժմ նա Վենիսամ հարուստ վաճառակա՛ ի գործակալն էր և իր ապագայի համար ամենայն ինչ բարիք կը սպասէր նորա ազնուութենէն: Ինչքան երիտասարդներ կան, որ սնտախ հրապոյրներու ետեւ ընկած, իրենց մարմինն ու հոգուն վնաս կը բերեն: Ողորմութեամբ Աստուծոյ Ֆրանկլին ուղիղ ծամբու վրայ մնաց և կըրցաւ պահպանել զինքը այն դժուար փորձանքներու մէջ, որք դեռ հասնելու էին նորան:

(Շարունակելէ):



Ն Ո Ւ Է Ր

Անկեղծ սրտից իմ ազնիւ բարեկամ Պետրոսի Հայկազնոյ

Տ Ա թ Ե ՛ ի

Մի ժամանակ բաղդը ինձ վիճակեց մընալու Տաթև դիւղումը, ուստի բաւականաչափ տեղեակ լինելով նրանց ներքին և